ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ՄԱՅԻՍԻ 20-ԻՑ 23-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԼԱՅՊՑԻԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2025թ. մայիսի 20-ից 23-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Լայպցիգ)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարություն

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Միջազգային տրանսպորտային ֆորումի ամենամյա գագաթնաժողովին մասնակցություն, որն անցկացվում էր «Համաշխարհային կայունություն գլոբալ ցնցումների պայմաններում» խորագրի ներքո, այն նպատակ ուներ միջազգային փորձի ուսումնասիրում՝ արտաքին ճգնաժամերին, այդ թվում կլիմայական փոփոխություններին, համավարակներին և աշխարհաքաղաքական խափանումներին, դիմակայող տրանսպորտային համակարգերի կայունության ամրապնդման ուղղությամբ:

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ, քննարկումներ և առանձնազրույցներ մասնակից երկրների ներկայացուցիչների հետ: Առանձին հանդիպում և քննարկում է տեղի ունեցել Համաշխարհային Բանկի ներկայացուցիչների, Անվտանգ և Կայուն Տրանսպորտի Արևելյան Դաշինքի (EASST) նախագահի հետ:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Քննարկվել են քաղաքային կայուն և ներառական շարժունակության ապահովման ռազմավարությունները, ընդգծվել է բազմաշերտ հասանելիության և տարբեր

սոցիալական խմբերի շարժունակության կարևորությունը: Լոգիստիկ միջանցքների դերը ներկայացվել է որպես տարածաշրջանային զարգացման և բազմակերպ փոխադրումների խթանման գործիք: Ներկայացվել է 21-րդ դարի տրանսպորտային անվտանգության նոր մոտեցումը՝ մասնավորապես ավտոմատ արգելակման համակարգի ցուցադրությամբ: Քննարկվել է նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը՝ դիմակայուն և ճկուն տրանսպորտային համակարգերի կառուցման նպատակով՝ պետական և մասնավոր շահերի համադրման միջոցով:

Միջազգային տրանսպորտային ֆորումի նախարարական նիստի շրջանակներում ելույթով հանդես եմ եկել ՏՆԵԿ բազմակողմ քվոտայի համակարգում Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի խարտիայի պահանջներին համապատասխան օրենսդրական դաշտ ձևավորելու և ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ: Ընդգծել եմ, որ Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է իր պատրաստակամությունը և հնարավորությունները Միջազգային տրանսպորտի ֆորումի շրջանակներում ամուր ինստիտուցիոնալ կապերի հաստատման, համագործակցության խորացման, կարողությունների և ենթակառուցվածքների զարգացման նպատակով համատեղ նախաձեռնությունների իրականացումը:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

ITF գագաթնաժողովին մասնակցությունից բխող առաջարկները վերաբերում են բեռնափոխադրումների ոլորտում ՀՀ միջազգային քվոտաների վերանայմանը և ավելացմանը, տրանսպորտային տվյալների կառավարման ոլորտում միջազգային հարթակներին միանալուն, կանաչ տրանսպորտի օրենսդրական խթանմանը, ինչպես նաև միջազգային պիլոտային ծրագրերում Հայաստանի ներգրավման հնարավորությունների ուսումնասիրությանը: Այս քայլերը կնպաստեն տվյալահեն և կլիմայահեն քաղաքականությունների զարգացմանը, միջազգային համագործակցության խորացմանը և ոլորտում ներդրումների ներգրավմանը:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

29.05.2025թ.